

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ARMENIAN MANUSCRIPTS
IN THE WALTERS ART GALLERY

Օր․ Սիրարփի Տէր Ներսէսեան Հոյակապ Հատորով մը կը ծանօթացնէ վերոյրեալ Հաստատութեան մէջ գտնուող Հայերէն 11 ձեռագիրները։ Գիրքը լոյս տեսած է 1973ին եւ կը բաղկանայ 108 մեծադիր էջերէ եւ 243 նկարատախտակներէ, որոնց վրայ պէտք է աւելցնել նաեւ սկիզբի տասնեակ մը էջերը, եւ արտաքոյ բնագրի զետեղումը ութ թերթ բազմազոյն նկարները։ Բազմամեայ աշխատութեան արդիւնք երկ մը, որ տաղանդաւոր եւ հմուտ հեղինակուհիին պատկանելի վաստակին վրայ կու գայ աւելնալու ի մեծ ուրախութիւն Հայ մշակույթի բարեկամներուն։

Պայթիմօրի վերոյիշեալ Հաստատութեան Հայերէն ձեռագիրներուն թիւը փոքր է թէ եւ, տասնէ մէկ աւելի միայն, —9 Աւետարան եւ 2 Շարական— բայց արժէքով շատ մեծ է եւ կարեւոր՝ Հայ մանրանկարչութեան պատմութեան գանձանքն երեսները հարստացնելու եւ լուսաւորելու տեսակէտէն։

Հատորիս սկիզբը (էջ iv) կայ հեղինակին հակիրճ մէկ ծանօթագրութիւնը, որուն կը յաջորդէ (v—vi) բովանդակութեան Յանկը, ապա կու գան Director Richard H. Randall, Jr.ի նախաբանը —Foreword— (vii), Նուիրատուներու Յանկը, երեք տասնեակ Հաստատութիւններ եւ անձեր, Հայ եւ օտար (viii), եւ Ս․ Տէր Ներսէսեանի Յառաջաբանը —Preface— (ix—x)։ Զեռագիրներու նկարազարդութիւնը կը զբաւէ 1—84 էջերը, որոնց կը հետեւին ձեռագիրներուն յիշատակարանները՝ Հայերէն (էջ 85—92) մատենադիտական Յանկը (93—97), բազդատութեան համար նկատի առնուած ձեռագիրներու ցանկը (99—102), եւ ի վերջոյ՝ Յատուկ Անուններու ևւայլն ընդհանուր ցանկը (103—108)։ Հատորին վերջին մասը կը կազմէ, ինչպէս վերը յիշեցինք, 243 նկարատախտակներու բաժինը։

Օր․ Տէր Ներսէսեան վերոյիշեալ ձեռագիրները կը ներկայացնէ իրենց հնութեան կարգով։ Կու տայ ձեռագրին նկարազարդութիւնը, պատմութիւնը, պարունակութիւնը, եւ պատկերներուն մանրամասն եւ նորակրկիտ քննարկումը։ Տողատակի ծանօթագրութեանց մէջ կը թուէ ալլեւայլ հեղինակներու կողմէ նախապէս կատարուած հրատարակութիւնները եւ ուսումնասիրութիւնները։ Նկարներու ուսումնասիրութեանց ընթացքին, կամ ստորիջեայ ծանօթագրութեամբ, կը համագրէ ցանկը ծանօթ աշխատութեանց, քանի մը յայտնի դրիչներու եւ ծագողներու, որոնց գործերէն մին տեղ գտած է այս հատորին մէջ․ ինչպէս Թորոս Ռօսլին (էջ 15), Յովհաննէս՝ որդի Վարդանայ (էջ 33, ծնթ․), Միքայէլ՝ որդի Բարդամի (էջ 65, ծնթ․), եւ Մկրտում Ասպահանցի (էջ 66, ծնթ․)։

Այս ընդհանուր բացատրութիւններէն ետք, այժմ տեսնենք վերոյիշեալ 11 ձեռագիրները միառմի, եւ փորձենք տալ զազափար մը տնոնց ունեցած առհասարակ բացատրիկ կարեւորութեան եւ արժէքին մասին։

1. Աւետարան, մազադաթեայ, անկիւնաւոր մեծ երկաթադիր, օրինակուած 966 թուին, Սարգիս քահանայի ձեռքով, «Հրամանով եւ ծախիք Թորոս քահանաի եւ միարանութեամբ ամենայն բնտանեացն» (Յիշատակարան, էջ 85ա) : Նկարադրութիւն էջ 1—5 : Գունաւոր նկար՝ տախտակ Բ : Սեւատիւղ նկարներ, թիւ 1—21 (տախտակ 1—11) : Այս Աւետարանին նկարչութիւնը մասնաւոր կարեւորութիւն ունի հայկական մանրանկարչութեան բնիկ սճին ուսումնասիրութեան համար :

2. Աւետարան, մազադաթեայ, անկիւնաւոր երկաթադիր, օրինակուած 1193ին, Կարապետ Լախնկոպոսի համար (Յիշտ. էջ 85բ—86ա) : Նկարադրութիւն էջ 6—9 : Գունաւոր նկար՝ տախտակ Գ : Սեւատիւղ նկարներ թիւ 22—42ա (տախտակ 12—29) : Հոռմկլայի նկարչական դպրոցին հնադոյն եւ լուսադոյն արտադրութիւններէն մին է սա : Նկարիչը աշխատած է Պօղոսեան Անապատին մէջ :

3. Աւետարան, մազադաթեայ, երկաթադիր միջակ մեծութեամբ, օրինակուած եւ նկարադարչուած Թորոս Ռօսլինի ձեռքով, 1262 թուին, Հոռմկլայի մէջ, Գորդ քահանայի որդի Թորոս քահանային պատուէրով, որ կը նրբիւրէ զայն Արքակաղնի Ս. Ուխտին (Յիշտ. էջ 86ա—87ա) : Նկարադրութիւն էջ 10—30 : Գունաւոր նկարք՝ տախտակ Ա եւ Դ : Սեւատիւղ նկարներ թիւ 43—137 (տախտակ 30—85) : Թորոս Ռօսլինի գործերուն մէջ ամէնէն հոխ կերպով նկարադարչուած Աւետարանն է : Դիտելի է սակայն որ նկարներուն մէկ մասը չունի Ռօսլինի վրձինին յատուկ անմրցելի նրբութիւնը, եւ կը վերադրուի իրեն զործակցող այլ նկարիչներու :

4. Աւետարան, թղթեայ, բոլորդիր, օրինակուած 1455ին, Գամաղիւղի Վանքին մէջ, Փիլիպպոս քահանայի համար : Գրիչն է Յովհաննէս, որդի Վարդանայ : Նկարիչը Խաչատուր քահանայ (Յիշտ. էջ 87բ—88ա) : Նկարադրութիւն էջ 31—44 : Գունաւոր նկարք՝ տախտակ Ե եւ Զ : Սեւատիւղ նկարներ թիւ 138—190 (տախտակ 86—126) : Կը յաջորդէ տախտակ 127, ուր կան չորս նկարներ Երուսաղէմի թիւ 2784 Աւետարանէն առնուած՝ բաղդատումի նպատակով : Խաչատուր քահանայի նկարադարգած այս Աւետարանը կը ներկայացընէ Խղանի Դպրոցին զարգացման բարձրագոյն չրջանի շահեկան արտադրութիւններէն մին :

5. Աւետարան, թղթեայ, բոլորդիր, օրինակուած 1475ին, Արիստակէս կրօնաւորի ձեռքով, Յակոբ արեղայի համար (Յիշտ. էջ 88բ—89բ) : Նկարադրութիւն էջ 45—51 : Թիւ 128 եւ 129 տախտակները կը ներկայացնեն արծաթեայ քանդակազարդ կողքին պատկերը : Սեւատիւղ նկարներ թիւ 197—246 (տախտակ 130—160) : Նկարչութիւնը կը պատկանի Վասպուրականի Դպրոցին : Բաղդատութեան համար Երուսաղէմի թիւ 2583 ձեռագրէն առնուած է նկար մը, թիւ 247 :

6. Աւետարան, թղթեայ, բոլորդիր, օրինակուած 1488ին, Ղազար երէցի ձեռքով, Եկեղեցաց գաւառի Ս. Օղսնտի Վանքին մէջ, Քարի եւ հաւատարիմ քրիստոնեայ Եղիա»յին պատուէրով (Յիշտ. էջ 89բ—90ա) : Նկարադրութիւն էջ 52—55 : Թիւ 161 եւ 162 տախտակները կը ներկայացնեն արծաթեայ քանդակազարդ կողքին պատկերը : Սեւատիւղ նկարներ թիւ 250—262 : Բաղդա-

տութեան համար Երուսաղէմի թիւ 298 ձեռագրէն առնուած են երկու նկարներ, թիւ 263 եւ 264 :

7. Աւետարան, թղթեայ, բոլորգիր, օրինակուած Ժէ. դարու սկիզբները, Ամիրճանի որդի Մելքոն գրչի ձեռքով, եւ նկարադարդուած ձանդակի որդի Յովանէսի միջոցաւ : Ստացոյն է Սարգսի գուտար Նապաթ (Յիշտ. էջ 90բ—91բ) : Նկարադրութիւն էջ 56—62 : Սեւատիպ նկարներ, թիւ 265—308 (տախտակ 174—199) : Յովհաննէս կը համարուի կարող նկարիչ մը, թէեւ ոչ սկզբնատիպ արուեստով :

8. Աւետարան, թղթեայ, բոլորգիր, օրինակուած 1666ին, տէր Բարդաժի որդի Միքայէլ գրչի ձեռքով, որ Ժէ. դարու առաջնակարգ գրիչ—նկարիչներէն մին էր : Ներկայ ձեռագրին նկարչութիւնը սակայն կը համարուի գործը նուազ ճարտար ծաղկողի մը : Նկարադրութիւն էջ 63—68 : Սեւատիպ նկարներ, թիւ 309—388 (տախտակ 200—218) :

9. Աւետարան, մագաղաթեայ, բոլորգիր, օրինակուած Ժէ. դարուն, նկարադարդուած է Յովհաննէս վարդապետի ձեռքով՝ հաւանաբար Կ. Պոլսոյ մէջ : Նկարադրութիւն էջ 69—75 : Գունաւոր նկարներ 4 հատ (տախտակ է) : Սեւատիպ նկարներ, թիւ 389—426 (տախտակ 219—229) : Յիշատակարան չունի, բայց զոյգ մը խորանարդի ստորտը կայ մէկ տող երկաթագիր արձանադրութիւն. «Զծաղկող Աւետարանին զՅովհաննէս վղպտս յիշեցէք ի Տէր» (նկար 412) :

10. Շարական, մագաղաթեայ, մանր բոլորգիր, օրինակուած 1678ին, Կ. Պոլսո, Յակոբ երէցի ձեռքով, Նաւասարդի որդի Ճլավի համար (Յիշտ. էջ 91բ—92ա) : Նկարադրութիւն էջ 76—82 : Գունաւոր նկար, տախտակ Ը : Սեւատիպ նկարներ թիւ 427—486 (տախտակ 230—241) : Այս ձեռագիրը շահեկան է իրենւ քնտիր օրինակ մը ճոխ կերպով նկարադարդուած Շարակնոցի :

11. Շարական, մագաղաթեայ, մանր բոլորգիր, օրինակուած Ժէ. դարուն : Յիշատակարան չունի. միայն մէկ տող գրուած կայ 11րդ թերթին վրայ. Տէր Ես. Փրկիչ, օրհնեալ զանաբժան գրիչս Աւետ[իտ] (էջ 83) : Նկարադրութիւն էջ 83—84 : Սեւատիպ նկարներ, թիւ 487—493 (տախտակ 242—243) :

Ուղեցինք ներկայ գրախօսականով մանրամասնօրէն ծանօթացնել հատորիս բովանդակութիւնը, որ կը կարծենք թէ օգտակար կրնայ հանգիստնայ հայկական մանրանկարչութեան պատմութեամբ զբաղող անձերու :

Յոյժ գնահատելի է աշխատանքը բաղմամատակ հեղինակուհիին, որ հայկական մանրանկարչութեան ուսումնասիրման եւ ծանօթացման յատկացուցած է իր կեանքին բաղմամբիւ տարիները, եւ ճոխացուցած Հայ մշակոյթի զանաւարտը հարուստ եւ հեղինակաւոր երկերու ստուար հատորներով :

Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ

10 Յունիս 1974